Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2016 թվականի դեկտեմբերի 1-ի նիստում,
արձանագրություն N 3,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Կ. Լ. Աթոյան
«01» _____ 2016 թ.

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն աշխատակարգը սահմանվում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ ՀՊՏՀ) գիտական խորհրդի 2016 թվականի հոկտեմբերի 19-ի «Գիտական խորհրդին կից համալսարանական հրատարակչական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) ստեղծելու և դրա կազմը հաստատելու ու գիտական խորհրդի 2006 թ. ապրիլի 4-ի «Ինստիտուտում հրատարակչական քաղաքականության մասին» որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետը ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման հիման վրա:
2. Աշխատակարգով նախատեսվում են հրատարակչություն ներկայացվող հրատարակության ենթակա նյութերի վերաբերյալ ներքոբերյալ պահանջներն ու պարտավորությունները.

   ա) Հրատարակման ենթակա նյութերի ձևավորման պահանջներն են՝

   - ✓ հեղինակի մասին տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, աշխատավայր, պաշտոն, գիտական աստիճան, կոչում),
   - ✓ էջի ձևաչափը՝ A4 (201 X 297 մմ),
   - ✓ լուսանցքները՝ 2 սմ բոլոր կողմերից,
   - ✓ տառատեսակը՝ Armenian Phonetic կամ Armenian Phonetic Unicode,

- ✓ տառաչափը՝ 12,
- ✓ տողամեջը՝ 1,5,
- ✓ պարբերության խորությունը՝ 1 սմ,
- ✓ վերնագիրը՝ գլխատառերով, 14 տառաչափով,
- ✓ գծանկարների և աղյուսակների տառաչափը՝ 10,
- ✓ գծանկարները նկարի տեսքով չներկայացնել,
- ✓ գծանկարի համարը և անվանումը՝ ներքևում, աղյուսակինը՝ վերևում,
- ✓ բանաձևերը՝ Equation,
- ✓ հղումները՝ տողատակում,
- ✓ հրատարակման ենթակա նյութը ներկայացնել տպագիր և էլեկտրոնային տարբերակներով:

բ) Նյութերին կից հրատարակչություն են ներկայացվում՝

- ✓ դիմում-հայտ՝ ռեկտորի անունով,
- ✓ քաղվածք ամբիոնի որոշումից՝ հրատարակությունը երաշխավորելու մասին,
- ✓ քաղվածք ֆակուլտետի խորհրդի որոշումից (անհրաժեշտության դեպքում՝ քաղվածք ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշումից),
- ✓ մասնագիտական երկու կարծիք անկախ փորձագետների կողմից, ովքեր ՀՊՏՀ աշխատակիցներ չեն,
- ✓ քաղվածք հանձնաժողովի որոշումից՝ հրատարակությունը երաշխավորելու մասին:

3. Հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով նախատեսված հրատարակությունների նյութերը ներկայացվում են հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ նախապես սահմանված ժամկետներում:
4. Թեմատիկ պլանում չընդգրկված, ինչպես նաև հեղինակների միջոցներով հրատարակությունները հրատարակչություն են ներկայացվում սույն աշխատակարգի 2-րդ ենթակետին համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հեղինակները ՀՊՏՀ հիմնական աշխատողներ չեն:
5. ՀՊՏՀ ոչ հիմնական աշխատողներ համարվող հեղինակների կամ հրատարակչության տարեկան թեմատիկ պլանում չընդգրկված նյութերը հրատարակվում են ՀՊՏՀ ռեկտորի հրամանով՝ ըստ «Հրատարակչական ծառայությունների

մատուցման» պայմանագրով սահմանված իրավունքների և պարտականությունների:

6. Հրատարակչությունը, սույն աշխատակարգի 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերում նշված պայմաններին համապատասխան ստանալով հրատարակության նյութերը, իրականացնում է դրանց հրատարակչական, տեխնիկական, մասնագիտական խմբագրման, էջադրման, սրբագրման, տպագրության համար բնօրինակի պատրաստման, տպագրության և կազմարարական աշխատանքները:
7. Բոլոր հրատարակությունների համար հրատարակչությունը նախապես կազմում է նախահաշիվներ, որոնք ներկայացվում են հանձնաժողովի քարտուղարի և գլխավոր հաշվապահի համաձայնեցմանը և հաստատվում ռեկտորի հրամանով:
8. Յուրաքանչյուր ամսվա հրատարակությունների վրա ծախսված նյութերի և այլ միջոցների հաշվարկը հրատարակչությունը ներկայացնում է համալսարանի հաշվապահություն՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը:
9. Հրատարակչության տարեկան թեմատիկ պլանների շրջանակներում հրատարակությունների լույս ընծայումից հետո 16 օրինակ տրվում է հրատարակչությանը նպատակային բաշխման համար (2 հատ՝ Հայաստանի ազգային գրապալատին, 2 հատ՝ Հայաստանի ազգային գրադարանին, 2 հատ՝ համալսարանի «Տնտեսագետ» հրատարակչությանը, 5 հատ՝ Արցախի պետական համալսարանին, 3 հատ՝ ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղին, 2 հատ՝ ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղին), 20 օրինակ հեղինակին և համահեղինակներին, իսկ մնացածը՝ համալսարանի գրադարանին:
10. Թեմատիկ պլանով և հեղինակների միջոցների հաշվին լույս ընծայված հրատարակությունները մուտքագրվում են համալսարանի պահեստ:
11. ՀՊՏՀ ոչ հիմնական աշխատողների հրատարակությունների իրացման հարցը կարգավորվում է «Հրատարակչական ծառայությունների մատուցման» պայմանագրով:
12. Սույն աշխատակարգը կիրարկվում է հաստատման օրվանից: